

# **ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԺԷ. ԳԼՈՒԽԸ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՒ ՄՏՔԻ ԾԱՒԱԼԵԱԼ ԸՄԲՈՆՈՒՄԻ ՃԱՆԱԶՈՂՈՒԹԵԱՍԲ ԳԻՏԱԿՑԻԼ**

Յովհաննու Աետարանը՝ Բրիստոսի աստուածութեան ջատագովութիւն մըն է ընդդէմ Կնոստիկեան աղանդաւորներուն: Յովհաննէս աետարանագիր, իր *«Ակիզքէն էր Բանն»* ասութեամբ մատնանիջ կ'ընէ թէ Յիսուս Բրիստոսի *պատմական*, սկզբնաւորութիւնը կը սկսի բոլոր սկիզբներու *նախասկիզբէն*: Յովհաննու Աետարանին բոլոր գրութիւնը ջանք մըն է ուսուցանելու և յայտնելու Յիսուս Բրիստոսը որպէս *«Արածին Որդին Աստուծոյ»*: Խորահայեաց աետարանագիր Յովհաննէս, կ'ըսէ. *«Եւ Բանը Մարմին եղաւ»*:

Յովհաննէս առաքեալ կը ներկայացնէ իր Վարդապետը բոլորովին տարբեր դիտանկիւնէն, որովհետեւ ան ճանչցած էր իր Վարդապետը աւելի խոր հասկացողութեամբ ու ջե՛րմ սիրով: Նաեւ, Յիսուս, այս աշակերտին մէջ ճանչցած էր եզակի հոգի մը և այդ իսկ պատճառով Ջինք Մարմնացնող սուրբ Կոյսը աւանդ յանձնեց Յովհաննէսի հոգատարութեան:

Յովհաննէս աետարանագիր, Յիսուսը կը ներկայացնէ որպէս *Աստուծոյ Խօսքը*, որ «Մարմին եղաւ»: նախաբանէն յետոյ, *Աստուծոյ Խօսքը* կը նոյնացուի Յիսուսի հետ:

Յովհաննու Աետարանը ոչ թէ առաքելական վկայութիւն մըն է պատմագրութեան, այլ՝ պատմութենէն *անդին* առաքելական վկայութիւն մըն է Յիսուս Բրիստոսի պատմութեան:

Յովհաննէս կը ջեջտէ *յախօնեական կեանքի* շնորհքը, որ մարդկութիւնը պիտի ստանայ Յիսուսի միջոցաւ: Այդ շնորհքին կ'արժանանան անոնք, որոնք կ'ընդունին Յիսուսը որպէս *Ճամբայ, Ճշմարտութիւն և Կեանք*:

@@@@@@@@@

**Յովհաննու Աետարան 17-րդ Գլուխ:**

**Համար 1.--**

*«Յիսուս այս խօսքերը վերջացնելէ ետք աչքերը երկինք բարձրացուց և ըսաւ.*

Յիսուս ինչո՞ւ Իր *աչքերը երկինք բարձրացնելով* կը խօսի Իր Հօրը հետ: Բոլոր կենդանի անասունները, իրենց աչքերը գետնի հողին դարձնելով կ'ապրին, որովհետեւ գիրենք ստեղծողը եղաւ գետնի հողը և ջուրը: Աստուած ըսաւ *«Ջուրերը կենդանութեան ջուրն են ու նեցող ջատ սողուններ հանեն, և*

*Թոչու նները երկրի վրայ, երկինքի հաստատությունը երեսը թոչին»* --Մանդոց Ա.20: Եւ ըսաւ Աստուած. *«Երկիր թող հանէ ջնջաւոր կենդանի՝ իր տեսակին պէս, անատա ններ, սողուններ ու երկրի գազաններ՝ իրենց տեսակին պէս. և այնպէս եղաւ»* --Մանդոց Ա.25:

Մարդիկ երկի՛նք նայելո՛ւմ կ'աղօթեն, որովհետեւ զիրենք կեանքի կանչող Արարիչ Աստուած երկինքն է: Ան ըսաւ. *«Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք, և ծովու ձուկերուն ու երկինքի թոչուններուն և անատա ններուն ու բոլոր երկրի, ու երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն թող իջխէ»* --Մանդոց Ա.26:

Բանականութեամբ և արուեստագիտութեամբ, գուցէ մարդ աշխարհի բազմաթիւ խնդիրները լուծէ, բայց ինքն իր խնդիրը՝ *«մարդու - բարդոյթը»* չէ կրցած լուծել: Մարդու բարեշրջութեան ընդհանուր պատկերը բաւականաչափ բարդ է և ցարդ, գիտականօրէն պարզաբանուած չէ: Գիտնականներ, ֆիզբացառութեամբ, իրենք զիրենք ամենագէտ կը նկատեն: *«Ողէն աւելի ծանր թոչող մե՛տնայ մը անկարելիութիւն է»* ըսած էր Անգլիացի գիտնական Լորտ Բելվին 1895 թուականին:

Բուսականութիւնը կեանքի տեսողականութեան պայմանն է: Բուսականութիւնը եթէ արտադրութիւնն էր կոյր և անանձնական բարեշրջութեան մը ու ո՛չ համարչուած *արարչական Գերմտփն*, ինչո՞ւ միայն խոտ և անպետ բոյս չէ արտադրած, այլ արդիւնաբերած է արջարներու յատուկ խոտ, մարդոց՝ կերակուր, համտեսելու պտուղներ, ծաղիկներ՝ գեղեցկագիտական հաճոյքի, և բամպակեղէն՝ հանդերձանքի համար: Այս անտեսումը ո՛չ թէ հաւատքի՛ թերացում է, այլ դատողութեան, աստուածմերժութեան և ***ին՛նաստուածուն թեան:***

Մարդ գտաւ, երեւան բերաւ թուաբանական օրէնքը, համեմատութեան ու ներդաշնակութեան կանոնները և ստեղծեց արուեստի գեղեցկութիւնը: Մակայն ան ոչ հնարեց ու ոչ ստեղծեց, այլ ***գ ա աւ:*** Այդ բոլորը հոն էին արդէն, ո՞վ դրաւ օրէնքներն ու կանոնները, դիպումնօ՞վ թէ Աստուած:

Մարդակապիկը կամ կապկամարդը Չարլզ Տարուին ո՞ւր տեսաւ արդեօք, Բադակոնիոյ դաշտերո՞ւն վրայ, թէ Բիլէի խորշերուն մէջ, Կալաբակոսի ջուրերո՞ւն ջուրջ, թէ Պրազիլիոյ կոյս ծառերուն ետեւ... յայտնի չէ՛: Չարլզ Տարուին իր տեսութեան յայտնաբերեց նոր յանդուգն վարկած մը: Ան Հնդկաց ովկիանոսի Բիլինկ կղզիին վրայ կարդաց բազմահազար տողերէ բաղկացող հնդկիկ Բերթուածներ՝ Մահպարաթա, Ռիկ Վետա, Ճաֆուսթալար, Ռամայանա: Անոնց մէջ գտաւ պատմութիւն մը, ըստ որուն կենդանիները ո՛չ միայն կը կերպարանա *փոխուին*, այլ նաեւ կը *էպփոխուին*: ***«Էվրեմ՛ս»***, պուրաց ան և յայտարարեց ***՛բարեշրջութեան՛*** վարկածը: Մարդկային միտքը ուսկի՞ց կը ստանայ իր հեղինակութիւնը:

Ո՞ր է գաղտնիքը իմացականության հեղինակության: Կան սիրոյ և անեսականության առաքինութիւններ: Գութ, ողորմութիւն, ընկերսիրութիւն, հիւրասիրութիւն, Բաջութիւն: Կան շնորհի և հաւատարմութեան առաքինութիւններ որոնք կը բխին Աստուծոյ Որդւոյն էութեան սուրբ լոյսէն՝ հեզութիւն, անկեղծութիւն, ճշմարտախօսութիւն, հաւատարմութիւն: Կան սրբութեան առաքինութիւններ՝ ժուժկալութիւն, ընդդէմ սեռային անբարոյութեան և արբեցութեան:

**Գոյութեան իմաստը, բանաւոր պատճառը-- raison d`etre «Ծանի՛ր Զբեզ»ը յարգանքի և հաւատքի բանաձեւում մըն է հանդէպ բանաւոր էակի կոչումին:**

Զենք կրնար հաւատալ թէ, մեր երկրի վրայ գոյութիւնը, պատահական դիպուածի մը արդիւնք է կամ ճակատագրի մը պատահարը: Մարդ արարածին գործօն մասնակցութիւնը իր գիտակցութեան պատճառաւ չափազանց մտերիմ ու սերտ է անհուն տիեզերքին հետ: Մարդկային սոյն իմացական կարողութիւնը, համայն գոյացութեան մէջ, մեզ կը ստիպէ մտածելու, որ մարդ էակը նպատակի մը համար ստեղծուած արարած է, ու ոչ պատահականութեան մէկ կոյր ու ժամանակաւոր արտադրութիւնը:

Սոյն պատճառաւ, Արարիչ Աստուած, մարդ արարածը չ՛ստեղծեց, այլ **ըրաւ**, որ կը նշանակէ.-

1. Գործ մը՝ աշխատութիւն մը կատարեց, ո՛չ թէ խօսքով ստեղծեց, այլ նախ խորհեցաւ, կշռադատեց, թէ կ՛արժէ՝ մարդ արարածին Իր Պատկերն ու Նմանութիւնը--ազատ կամք--տալ թէ չի տալ: Հոգեկան աշխատանք տարաւ:
2. Իրեն նման կատարելութիւն մը կերտէ, որ գործէ ու տիրէ երկրին:

***«Հա՛յր, ժամանակը հասած է, փառաւորէ՛ Որդիդ, որպէսզի Որդիդ ալ Զեզ փառաւորէ»:***

Ի՞նչ մտերիմ և սերտ խօսակցութիւն չօր Աստուծոյ և Որդւոյն միջեւ, որուն հանդիսատես կ'ըլլան աշակերտները: Եւ Ի՞նչ մեծարանք մարդ արարածին, որ ա՛ն ալ ներկայ կ'ըլլայ սոյն թագուն խօսակցութեան: Յիսուս ոչ թէ Աստուծոյ *մայի՛ն* կը խօսի, այլ կը ԽՕՍԻ ԱՍՏՈՒԾՈՒՅ ՀԵՏ: Հաւատքը, սրտի խորութիւններէն ելած լոյսն է որ Գերագոյնին՝ Բացարձակին հետ կենդանի յարաբերութեան մէջ կը դնէ ենթական: Արուեստագէտ մը երբ անկեղծ է, երբ իր հառաչները ի խորոց սրտի են, իր կեանքին մէջ օր մը, պիտի սկսի դառնալ Նազովրեցի Խաչեցեալին: Անձի մը ինքզինքին հանդէպ բացարձակ անկեղծ ըլլալը բարոյական հերոսութիւն է:

**Համար 2.--**

**«Ամբողջ մարդկութեան վրայ Դու ն անոր իշխանութիւն և (հեղինակութիւն) տուիր, որպէսզի յախտենական կեանք տայ բոլոր անոնց՝ որ իրեն տուիր»:**

Սատանա կոչուած չարը, ո՛չ ամչնալ գիտէ և ոչ խայնիլ: Երբ ան չի կրցաւ, անցեալին մէջ, սպաննել Մանուկ Յիսուսը Հերովթէս թագաւորին օրով ներկայիս, կ'ուզէ չեզոքացնել Անոր իշխանութիւնը կեղծաւորութեամբ և նենգամտութեամբ: Յիսուս, Իր մարդեղացեալ հանգամանքին պատճառաւ, գնաց Յորդանան գետը մկրտուելու Յովհաննէս Ակրտիչէն: Յիսուս Իր մկրտութեան ընթացքին իմացաւ Հօր Աստուծոյ ձայնը, որ ըսաւ. *«Զո՛ւն ես Իմ սիրելի Արդիս. Բեզի՛ հաճեցայ»:* Ուստի Ան Բաշուեցաւ անապատ, հեռու մարդկային ժխորէն ու միջամտութենէն:

Այդ սրբազան ամայութեան և խորհրդաբանական մենութեան մէջ, Յիսուս կորսնցուց մարմնականին պահանջներն ու ժամանակին սահմանումը և ապրեցաւ Իր նախամարմնացման երկնատեսիլ Հայր Աստուծոյ հաղորդութիւնը: Թառասուն օրերու մելանուջ խորհրդակցութեամբ, ստացաւ Իր առաքելութեան ուրուագիծ ծրագիրը: Յիսուս թէեւ հեռացած էր աշխարհիկ և մարմնական պահանջներէ, սակայն չարամիտ Սատանան իր ստուերային որպիսութեամբ կը դառնար Անոր շուրջ ջլատելու և պառակտելու Անոր առաքելութիւնը, որովհետեւ Յիսուս մարմնացած էր որպէս մարդու Արդի կորսընցընելու Սատանային իշխանութիւնը համա՛յն աշխարհէն:

Մարդեղացեալ Յիսուս, հազիւ վերադարձած էր իրագործելու երկնային առաքելութիւնը, Սատանան մօտեցաւ Անոր որպէսզի ի՛նք պարգեւէ այդ բոլոր իշխանութիւնը և հեղինակութիւնը Յիսուսի, առանց խաչելութեան, ցաւի և անարգանքի: Եւ Սատանան ըսաւ Յիսուսի.

**«Բեզի պիտի տամ այս ամբողջ իշխանութիւնը և ասոնց փառքը, որովհետեւ ինձի տրուած է, և որուն որ ուզեմ՝ կու տամ զայն»--Ղուկ. Դ.6:**

Մարդեղացեալ Յիսուս լաւ կը ճանչնար դաւաճան Սատանան և նախընտրեց Բանի մը բառերով հեռացնել զայն Իր ընկերակցութենէն, ըսելով. *«Ետի՛ս գնա, Սատանա՛յ, որովհետեւ Արէնքի գիրքին մէջ գրուած է.*

**«Ըու Տէր Աստուածդ պէտք է պաշտես և միայն Անո՛ր ծառայես»--Մատթ. Դ.10:**

Յիսուս Գալիլիա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ որպէսզի

ինչպէ՛ս որ անապատին մէջ յաղթած էր Սատանային, յաղթահարէ զայն նաեւ մարդոց սրտերէն ու հոգիներէն:

Յիսուսի պատահած վերոյիջեալ փորձութիւնը եզակի և Յիսուսապատկան փորձութիւն մը չէ՛ր միայն, այլ Սատանային վերոյիջեալ փորձութիւնը համա՛յն մարդկութեան մատուցուած իջխանութեան, հարստութեան և փառքի խայծն է: Սատանան խիստ փորձառու և նենգամիտ, մարդ որսացող խաբեքայ մըն է: Կարծէ ուսումնասիրել անոր ռազմագիտութիւնը և գործածել բարիի: Նոյնիսկ Յիսուս յանձնարարեց ըսելով. «Ահա կը դրկեմ ձեզ իբրեւ ոչխարներ՝ զայլերու մէջ: Ուստի *խոյրագէտ եղէ՛ք օձերու (Սատանային) պէս, և անմեղ առաւ նիւնէրու պէս*»--Մատթ Ժ.16:

Փորձութիւն կը կոչուի ոեւէ նեղութիւն կամ կացութիւն որ մեր հաւատքը փորձի կ'ենթարկէ և կրնայ պատճառ դառնալ որ մարդ մեղքի մէջ իյնայ կամ Աստուծմէ հեռանայ: Փորձութիւնները կրնան գալ դուրսէն՝ փորձիչէն--Մատթ. Դ.3, Մարկ. Ա.13, Ղուկ. Դ.2 ԺԳ. 22: Կամ գալ ներսէն՝ մարդուս ցանկութիւններէն: Յակոբոս առաքեալ կը գրէ.

***«Իւրաքանչիւր մարդ կը փորձուի՝ իր իսկ ցանկութիւններէն տարուելով ու խաբուելով: Ապա ցանկութիւնը յղանալով՝ մեղքին ծնունդ կու տայ, իսկ մեղքը երբ իր լրումին հասնի՝ մահուան պատճառ կ'ըլլայ»*--Յակ. Ա.14-15:**

Յիսուսի փորձութիւնները միշտ եղած են չարին կողմէ:

1. Նախ Սատանայէն անապատին մէջ:
2. Փարիսեցիներէն՝ Զինս առողներէն:
3. Փարիսեցիները, մօտենալով Անոր, փորձեցին Զայն ու ըսին. «Օրինաւոր է որ մարդ իր կինը արձակէ ամէն յանցանքի (և ամէն ատեն)»--Մատթ. ԺԹ.3:

Փորձութիւնները թէպէտ անխուսափելի են, բայց առիթ են նաեւ՝ որ մարդ իր առաքինութիւնները յայտնէ, յաղթող դուրս գայ և հետզհետէ կատարելագործուի-- Ա. Պետ. Ա. 6-7: Զրիստոս միշտ իրեններուն օգնութեան կը հասնի փորձութեանց մէջ. *«Ձեր կրած փորձութիւնները մարդկային սահմաններէն դուրս փորձութիւններ չեն: Բայց վստահեցէ՛ք Աստուծոյ. Անիկա թող պիտի չի տայ որ ձեր կարողութենէն աւելի փորձութիւն մէջ իսկ ցոյց պիտի տայ զայն յաղթահարելու միջոցը, որպէսզի կարենա՛ք տոկալ»*--Ա. Կորնթ. Ժ.13, Բ. Պետ. Բ.9:

*«Անոնք որ կ'ուզեն հարստանալ՝ կ'իյնան փորձութեան, որոգայթի և ջատ մը անմիտ ու վնասակար ցանկութիւններու մէջ, որովհետեւ բոլոր չարիքներու ն արմատը **արծաթսիրութիւնն է**»*--Ա. Տիմոթ. 2.9-10: *«Զանի որ պահեցիր իմ համբերութեան խօսքս, ես ալ պիտի պահեմ Քեզ փորձութեան*

ժամուսն, որ պիտի գայ ամբողջ երկրագունդին վրայ՝ փորձելու համար երկրի բնակիչները»--Յայտ. Գ.10:

Տակաւին գաղտնիք մըն է էութիւնը այն անսկիզբ հոգեկան Տարրին՝ որ միւս բոլոր համահաւաք տարրերուն բաղադրութեան կեանք կը շնորհէ, ու զանոնք կ'օժտէ աճելու, բազմանալու, փոխարկուելու և միջավայրին յարմարելու: Ըստ կարգ մը գիտնականներու, կեանքը մեքենական չէ՝ այլ՝ ստեղծագործ, այսինքն ծրագրուած է: Հետեւաբար այս ծրագրուած երեւոյթը կը պահանջէ Ծրագրող մը: Անբացատրելիին և անիմանալիին դիմաց երբ անօգնական կը զգանք մենք զմեզ, անհրաժեշտ չէ հաւատքի դիմել և անտեսել բանականութիւնը: Սակայն բանականութիւնն ալ իբր մէկ մասը մարդուն՝ անօգնական է: Ըստ Այնըջթայնի, երբ մարդ արարած, անծանօթի սեմին կը գտնուի, Աստուծոյ նախասահմանին առջեւ կը զգայ ինքզինք:

Ժամանակը եւս, իր դարերու սահանքով կը վկայէ, թէ մարդկութիւնը բանականութեամբ չէ կարողացած գոհացուցիչ լուծում մը գտնել **«Ինչո՞ւ կեանք գոյութիւն ունի»** հարցումին: Միայն Աստուած՝ մեզ Ծրագրողը այս անփոխարինելի կեանքը շնորհած է մեզի որպէս փոխառութիւն, և ո՛չ թէ նուէր: Պարտաւոր ենք արժեւորել ու սրբացնել մեր կեանքը, և վերադարձնել Տուխչին: Յիսուսի եկեղեցին՝ խորհուրդն ու կեանքն է համայն մարդկութեան: Մեքենական աշխարհափայտացք ունեցողներու համար, հաւատք առ Աստուած զառանցանք մըն է, իսկ հաւատաւորին համար՝ կեանք է, զօրութիւն և փրկութիւն:

Առաջին դարու քրիստոնեաներուն մէջ բարոյական գերադաս ուժ մը արտայայտուեցաւ, աստուածային գերիմաստ կեանք մը և նկարագիր մը ի յայտ եկաւ: Ի՞նչ իմաստ ունի եկեղեցի երթալ և կամ աղօթքի կենալ առանց զգալու Աստուծոյ ներկայութիւնը և հոգեկան գոհունակութիւնը չապրիլ:

1. Ի՞նչ իմաստ ունի աջակերտին դպրոց երթալը եթէ ուսում պիտի չստանայ:
2. Ի՞նչ իմաստ ունի մարդուն գործի երթալը, աշխատանք թափելը եթէ արդար դրամ պիտի չի ջանի:
3. Ի՞նչ իմաստ ունի մեր կեանքը, եթէ խոտի նման ապրինք զայն:
4. Կեանքը նպատակ մը հետապնդե՞լ է. պայքար մըն է կատարելութեան հասնելու համար:

Մարդկային կեանքը առանց *զոհողութեան*, չի կրնար ըլլալ ճշմարտօրէն մարդկային և վաւերականօրէն քրիստոնեական: «Հոգւոյ փրկութիւն»ը գաղափար մը չէ ուղեղին մէջ, զգացում չէ սիրտէն արտաբխող, հայեցողութիւն մը չէ, այլ՝ կեանք և ապրում անձով մարմնացնող արտայայտութիւն, ինչպէս Մագդաղիսէն ու Ջակֆէոս: Կեանքը պէտք է դառնայ հանդիսարան հաւատքի, սիրոյ և նուիրումի: **«Կեանք»** կը նշանակէ **«հաղորդութիւն»** Արարիչին հետ: Կեանքին իմաստը օրերու *շարքին* մէջ չէ, այլ օրերուն

**կեա՛նք** տալուն մէջ: *«Ի՞նչ մնաց, կենաճէն ինձի ի՞նչ մնաց, Ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, ա՛յն միայն»:* Կրօն **Վահան Թէքեան**

«Աստուած իր Հոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝ պիտի կենդանացնէ (յարուցանէ) նաեւ ձեր մահկանացու մարմինները»--11:

Ինչպէ՞ս կը բացատրե՛մ այն իրողութիւնը՝ թէ տարբեր ազգերու պատկանող մարդիկ, տարբեր ժամանակներու մէջ, մէկը միւսէն անկախօրէն յանգած են նո՛յն եզրակացութեան՝ *Յախտենական կեանքի*, կամ գոյա-վիճակի:

1. Պիւթակորաս, Սոկրատ, Պղատոն, Կիկերոն, Սենեկայ, առանց բրիստոնեայ ըլլալու, հաւատացին հանդերձեալ կեանքին, հաւատացին խորապէս:

2. Կրօնք և հանդերձեալ կեանք՝ հաշտընթաց են, բացարձակապէս:

Քրիստոնեաներու վարած սրբակեաց կեանքը յանդիմանութիւն մըն էր զիրենք ջրջապատողներուն՝ անգեղջ մեղաւորներուն: Կեանքը սրուած է մեզի, որ բաժնենք ուրիշներու հետ: Ո՛վ որ իր կեանքը կը բաժնէ ուրիշին հետ, անոր հոգին կը լեցուի կեանքի Ակնադրբիւրէն՝ Աստուծմէ: Ան կը սկսի ապրիլ ճշմարիտ կեանքը՝ **վերածնեա՛լ** կեանքը: Մարդկային կեանքը առանց յախտենական կեանքի, անիմաստ ու աննպատակ գոյութիւն մըն է:

Յիսուս անմահութիւն չի խոստացաւ Իրեն հաւատացողներուն, այլ **“Յախտենական կեանք”** ու մահուընէ յետոյ “ՅԱՐՈՒԹԻՒՆ”:

*«Աստուծոյ՝ որ կը հասունցանէ իւրաքանչիւրին իր գործերու և համեմատ յախտենական կեանք՝ անոնց՝ որ բարի գործերու մէջ համբերութեամբ յարատեւելով, կը փնտռեն փառք, պատիւ և անմահութիւն»*--Հոով. Բ.6-7:

**«Հոն՝ ուր կախողաններն են ճոճում,  
Ազատութիւնն է ման գալիս:  
Հոն ուր մեռելներն են ննջում,  
Յարութիւնն է մօտալուտ»**--Փարամազ:

Ներշնչուիլ Պօղոս առաքեալի հաւատով և յոյսով ան կ'ըսէ. « Եթէ Քրիստոս ձեր մէջն է, թէպէտ եւ ձեր մարմինները պիտի մեռնին, որովհետեւ մեղանչեցիք, սակայն *Մուրք Հոգին* դարձեալ կեանք պիտի տայ ձեզի, որովհետեւ արդարացաք: Այսինքն, եթէ *Աստուծոյ հոգին* ձեր մէջ կը բնակի, Աստուած, որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, *Իր Հոգիին միջոցաւ* որ ձեր մէջ կը բնակի՝ պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները»--Հոով. Ը.10-11: «Մենք եւս ներքնապէս կը հեծնենք՝ ակնդէտ սպասելով որդեգրութեան, այսինքն՝ *մեր մարմինին փրկութեան»*--Հոով. Ը.23: *«Յարութեան Տօնը կը մնայ գազաթնակէտային իմաստով ամենէն փառապանծ և ներշնչող տօնը, փառապսակը Քրիստոսի կեանքին և կտակին»:*

### Համար 3.

**«Յաւիտենական կեանքը Քեզ ճանչնա՛լն է՝ որպէս Ճշմարիտ Միակ Աստուած և ճանչնալ Յիսուս Քրիստոսը՝ որ Դուն դրկեցիր»:**

Յաւերժութեան լուսաբացը ծնունդ առաւ Գողգոթայի տառապանքներէն և թափուր գերեզմանէն: Ո՛վ Յիսուս, Քեզմով անցեալը կը դադրի անցած ըլլալէ. Քեզմով ներկան կը դադրի անցաւոր ըլլալէ. Քեզմով յաւերժութեան մրմունջը կը դառնայ *Քայլերգ...*: Հարիւրաւոր խաչքարեր դէպի երկինք կը նային ու յաւերժութեան ակունքէն, ապրողներու յաւերժութեան գրոյց կու տան: Առաքեալներու կեանքը համակ, եղաւ զրկանք ու տառապանք, նուիրում, պայքար ու նահատակութիւն որպէսզի չի կորնչի յաւերժութեան Լոյսը՝ Յիսուս Քրիստոս: Տիեզերքի Արարիչը մարդուն մէջ դրած է յաւիտենականութեան իղձը, մարդ արարածը կը տենչայ մշտական կեանքին, կ'ուզէ ապրիլ յաւերժօրէն: Այս ըղձանքը ինքնին գրաւականն է յաւիտենութեան:

### **Ի՞նչ է ճանաչողութիւնը:**

Հասկցուած յարաբերութեան և ըմբռնուած ճշմարտութեան հականիշը *կարծիք*-ն է: Իմացաբանութեան մէջ՝ ճանաչողութիւնը ենթակային (իբրեւ ճանաչող) և առարկային (իբրեւ ճանաչուող)-ի միջեւ գտնուող յարաբերութիւնն է: Ճանաչողութեան բնոյթին սահմանումը կը տարբերի ըստ տուալ իմաստասիրական դպրոցին: Երբ չի կայ լաւ ճանաչողութիւն՝ չկայ նաեւ հզօր սէր: Աւետարանը թափանցելու է ոչ միայն իմացականութեան, այլ մարդու ամբողջական էութեանը: Աստուածճանաչումը պարզ հետաքրքրական ժամանց մը կամ տեղեկութիւն հաւաքել ըլլալու չէ՛, այլ մարտակոչ մը: Ապրումներ և գաղափարներ կը հարստանան երբ հեղինակը կամ բանաստեղծը *կ'ապր'ի* ցաւին, երանութեան և ոգեւորութեան հարազատութիւնը: Մարդկային յայտնագործութիւններու կատարը՝ Յիսուսի ճանաչումն է որպէս Փրկիչ և Տէր:

զԱստուած չի ճանչնալով պաշտելը՝ կոպաշտութիւն է, և գոհացում չի կարողանար տալ երբեք: զԱստուած՝ Յիսուսի ապրումին մէջ կը տեսնենք, Անոր մէջէն կը դիտենք, Անոր միջոցով կը ճանչնանք: Պօղոս առաքեալ Յիսուսը ճանչնալու բանալին կու տայ Փիլիպպէի եկեղեցիին, ըսելով.

***«Ճանչնալ Քրիստոսը, անոր յարութեան զօրութիւնը, և անոր չարչարաններուն մասնակից դառնալ»--Փիլիպ. Գ.10:***

«Ոչ ոք կը ճանչնայ ( and accurately understands--ճշգրտօրէն կը հասկնայ) Որդին, եթէ ոչ՝ Հայրը. և ոչ ոք կը ճանչնայ (ճշգրտօրէն կը հասկընայ) Հայրը, եթէ ոչ՝ Որդին, և ան որուն ( deliberately will) ուզէ յայտնել Որդին--Մատթ. ԺԱ.27: Երբ մարդ ճշմարտութիւնը ճանչնալ կը սկսի,

սրսին մէջ սրբազան զայրոյթ մը կը զգայ անիրաւութեան ու բռնութեան դէմ: «Աստուծոյ Որդին եկաւ ու բացաւ մեր միտքերը, որպէսզի ճանչնանք ճշմարիտ Աստուծը»--Ա. Յով. Ե.20:

#### **Համար 4-5**

**«Երկրի վրայ ես Քեզ փառաւորեցի՝ ամբողջացնելով այն գործը որ ինձի սոււիք որ կատարեմ»: Եւ այժմ, Ո՛վ Հայր, փառաւորէ՛ զիս այն փառքով որ ունէի Քու հետդ՝ աշխարհի ստեղծագործութենէն առաջ:**

Ի՛նչ փառք ու փրկութիւն, բռնել ու չի թողուլ աստուածային բարերար Ձեռքը, այդ հրաշագործ ու ամենասուրբ Ձեռքը, որ զթառատ՝ կու տայ ու կը մոռնայ, կը փրկէ ու կը գոհանայ, կը նախատուի ու կը ներէ, և ցոյց տրուած ապերախտութիւններու հակառակ՝ չի զրկեր մեզ Իր աստուածային շնորհներէն ու պաշտպանութենէն:

Ասիկա Աստուծոյ փառաւորութեան վերացական հասկացողութիւնը չէ պարզապէս, այլ կը նշէ Աստուծոյ փառաւոր ներկայութիւնը, և յաճախ այդ ներկայութեան տեսանելի կամ զգալի մէկ արտայայտութիւնը՝ երեւումը կամ յայտնութիւնը: Պետրոս առաքեալ իր հիմնած եկեղեցիներուն կը գրէ, ըսելով.--

*«Ծինծու առասպել մը չէր որ ներկայացուցինք ձեզի, քանի որ անձամբ ականատես եղանք Յիսուսի մեծութեան, երբ ասիկա փառք և պատիւ ստացաւ Հօր Աստուծմէ, որ Իր մեծավայելուչ և փառաւոր Ձայնով անոր համար վկայեց, ըսելով. **«Ասիկա է Իմ սիրելի Որդիս, որուն ես հանճեցայ»:***

Մենք անձամբ լսեցինք երկինքէն եկող այդ Ձայնը, որովհետեւ Յիսուսի հետ միասին էինք սուրբ լերան վրայ»  
--Բ. Պետ. Ա.17:

Ստեղծագործութեան և արարչագործութեան ճանաչումն ու Աստուածայայտնութիւնը անբաժանելի բացայայտութիւններ են նոյն Արարիչ Աստուծոյ: Աստուած ստեղծեց ամէն ինչ, ոչ թէ աւելցնելու համար Իր փառքը, այլ ցոյց տալու ու յարաբերելու մարդ արարածին հետ: Սէրը արտայայտութիւն է: Փառքն ու երանութիւնը այն բարձունքներն են, ուր բառերն ու խօսքերը կը դադրին և մարդ հոգեկան յափշտակութեան մէջ կը տեսնայ զԱստուած ու կը ճանչնայ ինքզինք: Փառք ըսուածը իրական մեծութեան շուքն է, բարութեան՝ փայլը, առաքինութեան ճառագայթը:

Փառաւորութեան ճամբան, ըստ առաքելական հասկացողութեան:

ա. «Այնուհետև Յիսուս սկսաւ յստակօրէն յայտնել աշակերտներուն, թէ պէտք է որ Ինք երուսաղէմ երթայ, ջատ չարչարանքներ կրէ քահանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի ծերերէն և սպաննուի ու երրորդ օրը յարութիւն առնէ»--Մատթ. ԺԶ.21:

բ. Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Բազում նեղութիւններով է որ մենք պէտք է մտնենք Աստուծոյ Արքայութիւնը»--Գործք. ԺԴ.21:

Աշակերտները, Քրիստոսի Խաչելութենէն և Յարութենէն յետոյ է միայն, որ հասկցան նեղութիւն կրել: «Ես այնպէս կը խորհիմ, թէ ներկայ ժամանակի չարչարանքները ոչի՛նչ են գալիք փառքին բով՝ որ մեզի պիտի յայտնուի»

--Պօղոս առաքեալի գրութիւնը, Հռոմ. Ա.18: *«Այի՛նչ տուած կ'ըլլաւ մեր Երկնաւոր Հօր. եթէ մեր ամբողջական սէրը չի տուիր արեւելք Իր տիեզերական փառքին»*--Վարդան Ա. Քհնյ. Տիւկերեան:

**Համար 6.--**

**«Բեզ յայտնեցի բոլոր անոնց, որ ինծի տուիր այս աշխարհէն»: Անոնք բուկդ էին և ինծի տուիր զանոնք: Անոնք խօսեցերդ գործարեցին:**

Կարդանք միասին մեր Տիրոջ անկեղծ ու մտերիմ խօսակցութիւնը Իր աշակերտներուն հետ, որ կ'ըսէ.-

*«Այլեւս ձեզ ծառայ չեմ կոչեր, որովհետեւ ծառան չի գիտեր թէ ի՛նչ կ'ընէ իր տէրը, այլ ձեզ բարեկամ կոչեցի, որովհետեւ ինչ որ Հօրմէս լսեցի ձեզի յայտնեցի: Դուք չէ որ Ձիս ընտրեցիք, այլ Ե՛ս ձեզ ընտրեցի և նշանակեցի ձեզ՝ որ երթաք և պաղաքեր ըլլաք և ձեր պատուը մնայուն ըլլալ, որպէսզի Հայրս տայ ձեզի ինչ որ իմ անու նովս խնդրէք: Դարձեալ կը պատուիրեմ ձեզի, սիրեցէ՛ք իրար:*

*Եթէ այս աշխարհին պատկանած ըլլալիք՝ աշխարհը ձեզ պիտի սիրէր, որպէս իրմէ նոյոզ մէկը: Բայց աշխարհը ձեզ կ'ատէ, որովհետեւ ես ձեզ այս աշխարհէն զատեցի, և դուք այս աշխարհին չէք պատկանիր այլեւս»*--Յով. ԺԵ. 15-19:

Թէեւ չի կայ առանձնաշնորհեալ ազգ, սակայն կա՛ն մենաշնորհեալ անձեր: Աստուած ինչո՞ւ զանազանութիւն կը դնէ մարդոց միջեւ: Որովհետեւ մարդ արարած ունի "ազատ կամք", ա՛ն կ'ընտրէ իր կեանքի ընթացքը: Կան անձեր, որոնք անձնատէր են ու նախանձուս և կը սիրեն այսօրը՝ ներկան, իսկ կան նաեւ մարդկային էակներ, որոնք անձնուրաց են և կ'սպասեն Աստուծոյ Թագաւորութեան: Օրինակ, երբ մէկը պտղատու ծառի մը

հանդիպի և ուզէ համտեսել անոր պտուղը, ձեռքը չ'երկնցներ ու հաս մը  
բաղելով չ'ուտեր, այլ կը զատէ, թէ ո՞ր մէկը հասուն է ու մեծ: Երկուսն  
Աստուած կը նայի իր մարդաստեղծ աշխարհին ու կ'ընտրէ անձնագրի և  
Զինքը սիրող անձեր, և նկատողութեան կը յանձնէ զանոնք Իր Միածին  
Որդւոյն Յիսուսի, որպէսզի զանոնք կանչէ որպէս Իր գործակիցները:

Կուզե՞ս ըլլալ ընտրեալ ու գործակցիլ Տէր Յիսուսի: Եղի՛ր անձ-  
նագրի, վստահէ Անոր կամքին, անձնուրացութեամբ ընդունէ հալածուիլ և  
նեղութիւն կրել, ու կեանքովդ ցոյց տուր բու որոշումներդ, որմէ յետոյ, դո՛ւն  
ալ պիտի լսես մեղանուջ Ջայն մը, որ կ'ըսէ բեզի. **«Ետեւէ՛ս եկուր»:**

Յիսուս ըսաւ. «Եթէ մէկը կ'ուզէ Իմ ետեւէս գալ՝ թող ուրանայ իր անձը  
(that is, disown himself, forget, lose sight of himself and his own  
interests, refuse and give up himself) և մշտապէս առնէ իր խաչը ու գայ Իմ  
ետեւէս. (that is, cleave steadfastly to Me, conform wholly to My example,  
in living and if need be in dying also) որովհետեւ ով որ ուզէ իր անձը  
փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ով որ կորսնցնէ իր անձը Ինձի  
համար՝պիտի փրկէ զայն ( from the penalty of eternal death)»--Ղուկ. Թ.  
23-24: «Յիսուս ... սիրեց անոնք որոնք այս աշխարհի մէջ Իրեն հետեւորդ էին  
և **ձայր աստիճան սիրեց զանոնք»**--Յով. ԺԳ.1:

Յիսուս Զրիստոսի ընտրեալ գործակիցին հաւատն ու վստահութիւնը իր  
Տիրոջը հանդէպ.--

**«Բարի պատերազմը մղեցի, կեանքիս ընթացքը  
աւարտեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետք ինձի կը  
մնայ միայն սպասել արդարութեան պատկին, որ  
Տէրը, արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինձի  
պիտի տայ դատաստանի օրը: Եւ պիտի տայ ո՛չ  
միայն ինձի, այլ նաեւ բոլոր անոնց՝ որոնք սիրով  
կը սպասեն Տիրոջ յայտնուելու նա»--Բ Տիմոթ. Դ.7-8:**

## Համար 7

**«Եւ հիմա գիտցան թէ ինչ որ ինձի տուիր՝ Բեզմէ կու գայ»,  
որովհետեւ այն խօսքերը որ ինձի տուիր՝ Ես իրենց տուի, և  
ընդունեցին ու ճշմարտապէս ճանչցան՝ որ Ես Բեզմէ ելայ, և  
հաւատացին թէ Դուն դրկեցիր զիս:**

Տէր Յիսուս Զրիստոս Իր բոլոր յայտարարութիւններուն և գրոյցներուն  
ընթացքին կը մեծարէ Հայր Աստուած, որ Ա՛ն է Նախագոն և երեւելի ու  
աներեւոյթ գոյութիւններու Ակնադրիւրը: Մարդկային կեանքը առանց մե-  
ռելոց յարութեան անիմաստ ու աննպատակ գոյութիւն մըն է: Զրիստոսի

յայտնութեամբ, կեանքը կը դադրի պարզ գոյութիւն մը ըլլալէ ու կը դառնայ արդիւնաբեր աստուածահրաշ ստեղծագործութիւն: Խաւարը *անգոյութիւն է գոյութիւնը* ուժ և սպառնում կը պահանջէ: Միայն Աստուած գոյ է Իր իսկութեամբ և իրականութեամբ, բոլոր արարածները իրենց գոյութիւնը կը պարտին արարչագործութեան կամ աստուածային լոյս Բխումին: «Քրիստոս ի՛նքն է Օծեալը, ո՛չ սոսկ իբրեւ բառ, այլ որպէս առաքելութիւն: *“Աստուծոյ Օծեալը”, որ Իր աստուածային անտեսանելի և անջօջափելի բնութիւնը խառնեց միացուց մեր մարդկային բնութեան, եղաւ Արարուն, նիւթին մէջ հոգի, որ կերպարանափոխեց մեր ողջ գոյութիւնը*» --**Գարեգին Ա. Կաթողիկոս:**

Արիստոտել ֆիզիքական մարմիններէ դուրս կ'ընդունի անշարժ և աննիւթ էութիւն, որ բոլոր գոյութիւններու հիմը կը նկատէ՝ Աստուծոյ Գոյութիւնը՝ *«ամէն ինչ շարժող, բայց ինքն անշարժ»:*

### Համար 9

**«Արդ, կ'աղօթեմ իրենց համար: Զեմ աղօթեր աշխարհին համար, այլ անոնց համար որ Դուն ինծի սուլիր, որովհետեւ անոնք Բեգի կը պատկանին:**

Յիսուս Քրիստոս ինչո՞ւ խտրականութիւն կը դնէ Իր ընտրեալներուն (Իրեն հաւատացողներուն) և աշխարհի միջեւ: Ան ուրիշ աղթիւ նաեւ ըսած է.

**«Մի՛ կարծէ՛ք թէ աշխարհին խաղաղութիւն բերելու եկայ: Ո՛չ- չեկայ խաղաղութիւն բերելու այլ՝ սուր»--Մատթ. Ժ.34**

Յիսուսի վերոյիշեալ խօսքը, Անոր ուսուցումներուն հակասումը չէ, այլ հաստատումը՝ թէ Իր ներկայութիւնը ինքնաբերաբար պատճառ պիտի ըլլայ բաժանումի, զինք չընդունողները հակադրելով ընդունողներուն: Որովհետեւ մեր երկրագունդ աշխարհը տակաւին կը պատկանի Սատանային: Սատանան, ինք խոստովանեցաւ Յիսուսի, ըսելով և ցոյց տալով Աշխարհի բոլոր թագաւորութիւնները և անոնց փառքը: Այս բոլորը Բեգի՛ կու տամ, եթէ երկրպագելով պաշտես զիս որովհետեւ *ինծի տրուած են* և որու որ ուզեմ կու տամ:--Մատթ. 7.8-10, Դուկ. 7.5-7: Ուստի Աստուած Որդւոյն, այս աշխարհ գալը և մարմնանալը, գաղտնի իմաստ մը և դե՛ր մը ուներ: Ի՞նչ կը կարծուի ըլլալ այդ գաղտնի առաքելութիւնը: Յիսուսի գաղտնի մուտքը այս աշխարհ, հիմնել էր սուրբ և ճշմարիտ "հինգերորդ զօրասիւն" մը, աստուածը նդդեմ չար թագաւորութեան մը մէջ, որ կը պատկանէր դաւաճան Սատանային: Այս հինգերորդ զօրասիւնը, Յիսուս կոչեց *«Էմ եկեղեցիս»:* Ո՛չ ազգային, ոչ ցեղային ոչ լեզուական և ո՛չ ալ *յարանուանակալ* եկեղեցի: Եկեղեցին կը

պատկանի Յիսուսի: Ան ոչ թէ պիտի ըլլար տեսանելի ու քարաշէն եկեղեցի մը, որ հպարտա՛նք պիտի ազդեր ուրիշներու իր ճարտարապետական կառոյցով, այլ պիտի ըլլար մարդոց որսորդ, իր ծառայասիրութեամբ անձնուրացութեամբ և նուիրումով:

Պիլթագորեան գաղտնի ընկերութիւններ իրենց խորհուրդներով պահեցին Պիլթագորեան տենչանքը, որ վերջ ի վերջոյ սոգորեց Հոմէական աշխարհի խորհող և զգայուն հոգիները: Նոյնպէս Յիսուս ուզեց պահել Իր եկեղեցին գաղտնի և անոր գործակալները համեստ և անճանաչելի: Եկեղեցին, ըստ Յիսուսի, քարաշէն կառոյց մը չէր, այլ հոգեւոր սիրոյ և աստուածճանաչումի հաւաքականութիւն մը: Այսինքն, անչառուիլ արտաքին աշխարհէ, խորասուզուի՛լ հոգիի խորը, քննութեան ենթարկել մեր բոլոր գաղտնի շարժումները: Սկզբնական եկեղեցին, Սուրբ Հոգիով և իրարու հանդէպ սիրով լեցուն հաւատացեալներու հաւաք մըն էր: Հետեւաբար Յիսուս ցնծաց Սուրբ Հոգիով և ըսաւ.

*«Գոհութի՛նն Քեզի, Հա՛յր, Տէ՛ր երկնքի և երկրի, որ ծածկեցիր այս բանը իմաստուններէն ու գիտուններէն և յայտնեցիր մանուկներուն (unskilled and untaught). այո՛, Հա՛յր, վասնզի այսպէս հաճելի եղաւ Քեզի: Ամէն ինչ արուեցաւ Ինծի Իմ Հօրմէս. և ո՛չ ոք գիտէ թէ ո՛վ է Արդիւն, եթէ ոչ՝ Հայրը, և թէ՛ ո՛վ է Հայրը, եթէ ոչ՝ Արդիւն և ա՛ն, որուն կը կամենայ Արդիւն յայտնել»--Ղուկ. Ժ. 21-22:*

#### **Համար 10**

**«Ինչ որ իմս է՝ այդ բոլորը Քուկդ է, և ինչ որ Քուկդ է ասիկա իմս է, և անոնք զիս փառաւորեցին:**

Վերոյիշեալ համարը ցոյց կու տայ մեզի Հօր և Արդւոյ քաղցր միութիւնը և գործակցութիւնը: Յիսուս ոչ միայն շնորհակալութիւն կը յայտնէ, այլ կ'ուսուցանէ աշակերտները, որ իրեն՛ք եւս ունենան նոյն մտերմութիւնը և հասկացողութիւնը իրարու և Աստուծոյ հետ: Աղօթքը վարժութիւն պէտք է դառնայ, զօրաւոր պահանջք մը, ոչ թէ միայն նեղութեան և տագնապի ընթացքին, այլ նաեւ փառաբանութիւն: Այսինքն, գոհութիւն և փառաբանութիւն կամ պաղատանք մատուցանել՝ անձնանուիրում և հոգեընծայում:

#### **Համար 11**

**«Ահա արդէն Քեզի կու գամ և այլեւս աշխարհի մէջ չեմ, բայց անոնք աշխարհի մէջ են: Սո՛ւրբ Հայր, անվտանգ պահէ զանոնք Քու Անունիդ զօրութեամբ, որովհետեւ Քու Անունովդ զանոնք ինծի**

**տւիր, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս ես և Դուն մէկ ենք»:**

Տէր Յիսուս, Իրեն պատահելի՛ք անմիջական անարգանքներն ու չարչարանքները մոռցած է, ու կը հետաքրքրուի աշակերտներուն ապահովութեամբ: Ի՞նչ աստուածահրաշ սէր, գորով և գուրգուրանք ցոյց կու տայ Յիսուս հանդէպ պարզ աշակերտներուն: Ան կրկին շնորհակալութիւն կը յայտնէ ձօրը, որ Ա՛ն տուած է սոյն աշակերտները իրեն: Յիսուս չի գանգատիր որ աշակերտները անգրագէտ են ու ոչ մէկը կը պատկանի մտաւորական դասի: Ան գիտէ և վստահ է թէ իր Հայրը ինչո՞ւ ընտրած է զանոնք:

Յիսուսի միակ աղաչանքն ու պաղատանքը Հօրմէն, աշակերտներուն մէկ և միասիրտ ըլլալն է, այնպէ՛ս ինչպէս Ինք միացած և հոգեպէս միակամ է ձօրը հետ: Արդեօք որքա՞ն վիշտ ու ցաւ է մեր Տիրոջ, տեսնել Ի՛ր հիմնած եկեղեցին այսօր, որ բաժան բաժան դարձած է թէ՛ ազգայնապէս, թէ՛ յարանուանական կերպով, ուր կը պաշտուի փոխանակ Աստուած, "ես"ին վարդապետութիւնները և կղերականներու թառամած նախապաշարումները:

Արբութեան և արդարութեան կանչուած հոգեւորականներ, միթէ չե՞ն մտածեր, թէ իրենց հակառակորդ Սատանան շարունակ ցոյց կու տայ Յիսուսի Անոր անսէր եկեղեցական մեծաւորները, որոնք կ'ապրին միայն փառքի և դրամի սիրոյն համար: Եկեղեցիներ, որոնք դարձած են խնճոյքի, պարահանդէսի վայրեր, ուր կը փառաբանուի ազգային տօներ, գեղարուեստի պատառիկներ, ու չի կայ աստուածաճանաչում և աւետարանական գիտութիւն: Ինչո՞ւ արդեօք Յիսուսի եկեղեցիները դատարկուած են Հիմնադրին Հոգիէն, ու կը ծառայեն աշխարհի իշխանին: Որքան վիշտ ու ցաւ է եկեղեցական անհոգի արարողութիւնները, խաչեցեալ Յիսուսի սրտին:

**Համար 12**

**«Աշխարհի մէջ երբ անոնց հետ էի, ես կը պահէի զանոնք Քու անունիդ զօրութեամբ, որովհետեւ Քու անունովդ զանոնք ինծի տուիր: Ես պահպանեցի զանոնք և անոնցմէ ո՛չ մէկը կորսուեցաւ, բացի անկէ՝ որ կորսուելու ճամբուն մէջ է, ... Բայց հիմա Քեզի կու գամ, և այս խօսքերս աշխարհի վրայ կ'ըսեմ, որպէսզի իրենց սիրտերը լեցուին իմ կատարեալ ուրախութեամբս»:**

Եբրայեցւոց մէջ, ինչպէս Արեւելիի ուրիշ ժողովուրդներու մօտ, անձի մը անունը կը նոյնանայ անձին հետ և նոյնիման անձը կը նշանակէ մանաւանդ երբ Աստուծոյ կամ Քրիստոսի անունին կը վերաբերի: Եբրայեցիներուն համար Տիրոջ անունը ա՛յնքան սուրբ էր, որ կը վախնային զայն արտասանելու, մանաւանդ որ Տասնաբանեայ պատուիրաններէն Յ-րդը կ'ըսէր՝ «Տիրոջ անունը պարապ տեղ բերանդ մի՛ առներ»: «Տիրոջ անունը կանչել» Հին Կտակարանէն առնուած բացատրութիւն մըն է, որ կը նշանակէ Տիրոջ

հաւատալ և Իրեն ապաւինիլ»--Գործք Բ.21: «Յիսուսի անունով» դրկուիլ --Յով. ԺԴ.26, կամ մէկը ընդունիլ կը նշանակէ իբրեւ Յիսուսի ներկայացուցիչ դրկուիլ կամ ընդունիլ:

Յիսուսի հաւատալ և զԱյն ճանչնալ կը նշանակէ ուրախ և յաղթական զգալ կեանքի որեւէ եղելութեան ընթացքին, ուստի Յիսուս կ'ըսէ. *«որպէսզի իրենց սիրտերը չեցուին իմ կատարեալ ուրախութեամբս»:* Ներկայիս, մե՛նք հաւատացեալ կոչուածներս, որքա՛ն ուրախ կը զգանք մենքզմեզ: Ունի՞նք Յիսուսաբոյր յաղթանակին ուրախութիւնը, որ կը վարակէ նաեւ մեր շուրջիները կեանքի, կարծեցեալ, տխուր և յուսահատական պահերուն:

#### **Համար 14**

**«Ես Բու պատգամդ անոնց փոխանցեցի, և աշխարհը ատեց զանոնք, որովհետեւ անոնք այս աշխարհին չեն պատկանիր, ինչպէս ես աշխարհին չեմ պատկանիր:**

Ի՞նչ են ներկայ կղերականներու, Բարոզիչներու և Բահանաներու ակնկալութիւնը աշխարհէն: Ինչո՞ւ կարգ մը ուսանողներ կ'ընդգրկեն եկեղեցական ասպարէզը: Աստուածային կոչմա՞ն պատճառաւ, թէ պաշտօնի ընդունակութեան և փառքի՞ համար:

Ներկայ անհամար եկեղեցականներէն Բանի՞ կղերական սեպուածներ, պիտի ընտրէին նուիրուիլ և հետեւիլ Յիսուս Վարդապետին, եթէ կանխաւ գիտնային, թէ իրենց ապագայ կեանքը պիտի ըլլայ անարգանք, հալածանք և նեղութիւն կրել, փոխանակ փառքի և հարստութեան. ի՛ սէր իրենց սիրած Փրկչին: Ձի կարծուի թէ այս տողերուն հեղինակը ցնորած մըն է, Տէր Յիսուս Ի՛նք նախաձայնած է ըսելով.

*«Աստիճակ խօսեցայ ձեզի, որպէսզի Ինձմով խաղաղութիւն ունենամ: Աշխարհի վրայ նեղութիւն պիտի՛ ունենամ, բայց Բաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»--Յով. ԺԶ.33:*

*«Որովհետեւ այս աշխարհէն չեմ, այլ ե՛ս ձեզ ընտրեցի աշխարհէն, անոր համար աշխարհը կ'ատէ ձեզ: Յիշեցէ՛ք այն խօսքը զոր ես ըսի ձեզի. ...Եթէ իմ խօսքս պահեցին՝ ուրեմն ձերն ալ պիտի պահեն: Բայց նոյն բաները պիտի ընեն ձեզի իմ անուանս համար, որովհետեւ չեն գիտեր զԱյն, որ Ձիս դրկեց»--Յով. ԺԵ.19:*

## Համար 15

### **«Զեմ խնդրեր որ զանոնք աշխարհէն վերցնես, այլ՝ զանոնք Զարէն պահես»:**

Վերոյիշեալ խօսքերը իրենց ճոխ բովանդակութեամբ բացասական կը գտնեն ճգնաւորութիւնը՝ անապատական կեանքը: Յիսուս, թէեւ գնաց անապատ, սակայն միայն 40 օրուան համար: Ան ելաւ Պայծառակերպութեան լեռը սակայն քանի մը օրուան համար: Յիսուս, Հայր Աստուծոյ Պատգամաւորը, ապրեցաւ երկրի՝ վրայ, մարդոց հետ: Երեսուններեք տարիներ, համտեսեց մարդկային ողբերգութիւնը, ցաւը և վիշտը: Ան լացաւ, լացողներու հետ և ուրախացաւ ուրախացողներու ընկերութեան մէջ: Յիսուս, ոչ հանդերձանով և ոչ մէկ կերպով կը զանազանուէր Իր աշակերտներէն: Սոյն պատճառաւ դաւածան Յուդա պատուիրեց Սանհետրիմի զինուորներուն, որ ձերբակալեն զայն որ ինք պիտի համբուրէ:

Անիի մահմետական (Իսլամ) ամիրայի Փաւլուն որդին, որ Գրիգոր վարդապետի մը միջոցաւ Բրիստոնէութիւնը ընդունած էր, 15 երկար տարիներ ճգնաւորական կեանք վարեց և թաղուեցաւ Դրազարկի վանքին մէջ: Հայեր սոյն դէպքը հպարտութեամբ կը յիշեն, որպէս իրենց Եկեղեցւոյ մէկ յարթանակը: Ո՞վ ֆաջալերած է այս նորահաւատ Իսլամը, որ Բրիստոնէական հաւատքը ստանալէ յետոյ դառնայ ճգնաւոր: Ճգնութիւնը կը նմանի այն պաշտօնեային, որ ստանալով միայն մէկ տաղանդ կ'երթայ ու կը թաղէ զայն հողին մէջ:

Յիսուս Բրիստոս Իր աշակերտները չի կանչեց, որ ճգնութիւն ընեն, անապատի խորոջներու մէջ աղօթելով և ինքզինքնին մաշեցնեն: Այլ Յարթական Յիսուս Բրիստոս ըսաւ.

***«Ահա կը դրկեմ ձեզ իբրեւ ոչխարներ՝  
զայլերու մէջ: Աստի խորագէտ եղէ՛ք օձերու  
պէս, և անմեղ՝ աղաւնիներու պէս»--Մատթ. Ժ.16:***

Յիսուս Իր աշակերտները դրկեց համա՛յն աշխարհի բոլոր անկիւնները: Պօղոս առաքեալը Եւրոպա, Թովմասը Հնդկաստան և Պետրոսը Եգիպտոս, ու մնացեալները աշխարհի չորս ծագերը: Բարթողոմէոս սպանուեցաւ մորթագերծ ըլլալով, Պօղոս գլխատուելով և Պետրոս գլխիվար խաչուելով:

Առաքեալներէն ո՛չ մէկը ճգնաւորութիւն ըրաւ, բացի Պօղոս առաքեալէն ու այդ ալ միայն երկու տարի, որպէս պատրաստութիւն ճանչնալու Յիսուս Փրկիչը որ կոչուի առաքեալ:

### Համար 17

**«Արբազործէ՛ զանոնք Քու ճշմարտութեամբդ, որովհետեւ Քու Խօսքդ ճշմարտութիւն է: Ինչպէս որ դուն զիս աշխարհ դրկեցիր, ես ալ զանոնք աշխարհ դրկեցի: Իրենց համար ես ինքզինքս Քեզի կը նուիրաբերեմ, որպէսզի իրենք ալ ճշմարտապէս սրբազործուին:**

Ի՞նչ կը նշանակէ *ճշմարտութեամբ* սրբազործուիլ: «*սրբութիւն*» բառը նոր հորիզոններ, կեանքի նոր ըմբռնումներ ու մտածողութեան նոր կերպեր կը բերէ: Ա. Գրիգոր Տաթեւացիի հայեացքով. «*Արտի սրբութիւնը այն է, որով սիրտը կը մաքրուի և կը պայծառանայ կարենայ տեսնելու և ջերմտանդօրէն սիրելու համար զԱստուած».*

***Արբացումով նիւթականը՝ հոգեւորին,  
հունաւորը՝ անհունին, և ժամանակաւորը՝  
Անժամանցելիին հաղորդակից կը դառնան:***

Յիսուս Զրիստոս, Իր վերեւի խնդրանքով, ոչ թէ աշակերտներուն սուրբ ըլլալը կը խնդրէ Աստուծմէ, այլ՝ անոնց "ճշմարտութեամբ" սրբազործուիլը: Այս, *"ճշմարտութեամբ"* սրբազործուիլը, նոր տեսութեան մը կ'առաջնորդէ զիս: Յիսուս նախապէս յայտարարած էր ըսելով. «Ե՛ս եմ ճշմարտութիւնը և կեանքը»: Ուստի, ճշմարտութեամբ սրբազործուիլը, համեստ հեղինակին դիտանկիւնէն, կը նշանակէ, մաքրուիլ և սրբուիլ բոլոր այն կրօնական նախապաշարումներէն, որոնք հաւաքուած են եկեղեցական վարդապետութիւններէ, իմաստասիրական և քանասիրական տեսութիւններէ, որովհետեւ Աստանան որովհի հասիկներ կը նետէ մեր մտածումներուն մէջ արգելք ըլլալու համար մեր սրբութեան և ուղղամտութեան: Հետեւաբար ընդունինք Յիսուս Վարդապետին ճշմարիտ պատուիրաններն. ու վկայութիւնները, որոնք կը գտնուին Աետարաններուն մէջ: Զրիստոսի պատկերը սրբութեան և անհուն սիրոյ մարմնացումն է, որ պիտի սրբազործէ մե՛զ ալ մեր նախապաշարումներէն:

### Համար 20-21

**Զեմ աղօթեր միայն իրենց համար այլ նաեւ անոնց համար՝ որոնք անոնց Բարոզութեամբ ինծի պիտի հաւատան: Կ'աղօթեմ որ անոնք բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս որ Դուն, ո՛վ Հայր, իմ մէջս ես, և ես Քու մէջդ, այնպէս ալ անոնք մեր մէջ ըլլան, որպէսզի աշխարհը հաւատայ, որ դուն դրկեցիր Զիս:**

Վերլուծութեան և «քանականութեան» օրէնքներու չենթարկուող ամենամեծ երեւոյթներէն մէկը **հաւատա՛լն** է, հաւատալ Աստուծոյ գոյութեան և

Անոր Հայրութեան: Զրիստոնեայի մը դերը՝ հաւատալ, տառապիլ և սպասել է: Այս է որ Յիսուս կ'ընէ աղօթելով Հօր ու կ'ըսէ. *«Եւեւ անոնց համար՝ որոնք անոնց Բարոզութեամբ Ինձի պիտի հաւատան: Յիսուս վստահ է ու կը հաւատայ թէ Իր եկեղեցին պիտի տարածուի ու անհամար անձեր պիտի գան հաւատփի: Սոյն պատճառաւ Ան աղօթած կ'ըլլայ Բեզի և ինձի համար ալ: Ուստի Յիսուս անձամբ աղօթած է մեզի համար: Ի՞նչ հրաջֆ և առանձնաշընորհում:*

Ուղիհանրապէս մարդիկ կը փափափին ապահովութիւն ունենալ, թէ՛ կեանքի և թէ՛ ինչքի: Այս փափաքը ոչ սխալ է և ոչ ալ նիւթապաշտութիւն, այլ խելացութիւն: Միայն թէ անոնք սխալ տեղ կ'ապահովեն իրենց կեանքերը և ինչքերը: Յիսուս Իր հաւատացեալներուն կ'ըսէ թէ լաւագոյն ապահովութիւնը Աստուծոյ և Յիսուսի մէջ ըլլալն է. որովհետեւ Ան կ'ըսէ. *«Այնպէս ալ անոնք մեր մէջ ըլլան:»*

Եկեղեցիներուն բաժան բաժան ըլլալը մեծագոյն գայթակղութիւնը եղած է, որ աշխարհ չի ճանչնայ զԱստուած: Յիսուսի եկեղեցին բաժնուած է ցեղային և ազգային զանազանութեամբ ու նաեւ վարդապետական տարակարծիքներով: Մեծագոյն տարակարծութիւնը, իրար չի սիրե՛լն է:

Մալխոմ Էֆսի երբ կը հարցուի թէ ի՞նչ է իր ուխտագնացութեան (Մէքֆա) խորագոյն տպաւորութիւնը, ան կ'ըսէ. «եղբայրութիւն»ը. ուր զանազան ազգեր, ցեղեր ու գոյներ ամբողջ աշխարհէն կու գան ու կը միանան որպէս մէկ հոգի...: Երբ միլիոնաւոր Իսլամներ հանդերձուած նոյն ճերմակ պատմութեանով և անճանաչելի թէ ով է հարուստը կամ աղքատը, տգէտը կամ ուսեալը: Այդ երեւոյթը կը խանդավառէ Բեզ: Ահա Իսլամի մը անկեղծ և ճշմարիտ վկայութիւնը: Զրիստոնեաներն եւս կրնա՞ն նոյն վկայութիւնը տալ եկեղեցիներուն և եկեղեցականներուն համար: Մտածենք և ապաշխարենք:

ԱստուածՈրդի Յիսուս, պաղատափին ու աղերսալի աչքերով ըսաւ Իր աշակերտներուն.

*Նոր պատուիրան մը կու տամ ձեզի. «Սիրեցէ՛ք իրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէ՛ք: Զեր իրար սիրելո՛վ է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք Իմ աշակերտներս էք»--Յով. ԺԳ.35:*

Զրիստոնեաներ եթէ կը զարմանան, թէ ինչո՞ւ եկեղեցիները չի կրցան դարձի բերել բոլոր աշխարհը Զրիստոսի հաւատփին, պատճառը իրենց ունայն փառամոլութիւնն ու ազահութիւնն է: Եկեղեցիները սիրեցին աւելի իրենց վարդապետութիւնն ու իմաստասիրութիւնը տարածել, քան թէ Յիսուսի՝ պատուէրները պահել:

**Համար 22-23**

**«Այն փառքը որ Ինձի տուիր՝ իրենց տուի, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս որ ես և Դուն մէկ (միակամ) ենք: Ես անոնց մէջ ըլլամ և Դուն՝ իմ մէջս, այնպէս որ անոնք կատարեալ կերպով մէկ (միացեալ) ըլլան, որպէսզի աշխարհը գիտնայ թէ Դուն դրկեցիր զիս և թէ սիրեցի զանոնք, ինչպէս որ Դուն զիս սիրեցիր»:**

Յիսուս Զրիստոսի աղերսանքն ու թախանձանքը առ Աստուած իր աշակերներուն համար, մարդկօրէն անհասկնալի և անբացատրելի է: Արովհետեւ երկրի վրայ չէ՛ տեսնուած մարդեղացեալ էակ մը, որուն աղերս աղօթքը հողաշէն արարած մը ականատես ըլլայ կամ իմանայ: Այս եզակի դէպք իրողութիւնը, աշակերտները թէ տեսան, թէ իմացան և թէ հարազատօրէն կը պատգամեն դարերէ ի վեր: Ինչո՞ւ, որպէսզի եթէ գտնուին *«մաքուր սրտով»* անձեր, անո՞նք միայն պիտի հաւատան Հոգեղէններու սէրը հանդէպ մարդ արարածին:

*Յիսուս «Աշխարհի մէջ էր, և աշխարհը Անով եղաւ, սակայն աշխարհը չի ճանչցաւ զԱյն: Իսկ անոնք որ ընդունեցին զԱյն՝ իշխանութիւն տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ որդիները, անոնց՝ որոնք կը հաւատան Իր անունին» --Յով. Ա.10-12:*

Յիսուսի մեծագոյն փառքը՝ կոչուիլ էր **«Արդի Աստուծոյ»**: Երբ Ան կ'ըսէ. *«Այն փառքը որ Ինձի տուիր՝ իրենց տուի»*, որքա՞ն ճշմարիտ և վսեմ իրողութիւն մըն է: Արովհետեւ Յիսուս կ'ըսէ այն բոլոր անձերուն, որոնք *«ընդունեցին Զինք՝ իշխանութիւն տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ Արդիները»*: Յիսուս Զրիստոսի ճշմարտախօսութիւնը անգերազանցելի է:

Աշխարհի վրայ բոլոր փառամուկները ամէն կերպ միջոցներ գործածեցին հասնելու համար իրեն երազած փառքին: Անոնց միջոցները, բոլո՛րն ալ չարին զէնքերն էին, բռնութիւն, ճնշում և սպաննութիւն: Պատմութեան անթիւ փառամուկները չի կրցան հասնիլ իրենց ստուերային փառքին: Անոնք մեռան, և անհամար կեանքեր փճացուցին և մարդկութիւնը ջարդեցին:

Աշխարհ հանդիսատես եղաւ միայն եզակի և աննախընթաց փառքի մը, որուն հասնելու համար տիեզերքի Դիւցազն Յիսուս չի գործածեց զէնք կամ բռնութիւն, այլ անոնց փոխարէն Ի՞նք անարգուեցաւ և խաչուեցաւ: Ինչո՞ւ, որպէսզի ցոյց տայ մարդկութեան, թէ փառքի սանդուխը ո՛չ թէ մահասփիւռ զէնքն է, այլ *«Աստուածային սէրն ու ծառայութիւնը»* համա՛յն մարդկութեան:

## Համար 24-26

«Հա՛յր, անոնք որոնք ինձի սոււիը՝ կ'ուզեմ որ ինձի հետ ըլլան՝ ո՛ւր որ ըլլամ, որպէսզի տեսնեն իմ փառքս, այն փառքը՝ որ ինձի սոււիը, որովհետեւ զիս սիրեցիր աշխարհի ստեղծագործութենէն առաջ: Արդա՛ր Հայր, թէեւ աշխարհը Քեզ չի ճանչցաւ, բայց ես Քեզ ճանչցայ. և ասոնք ալ գիտցան թէ Դուն դրկեցիր զիս: Քեզ ճանչցուցի անոնց և պիտի շարունակեմ ճանչցնել, որպէսզի անոնց մէջ ըլլայ այն սէրը որով զիս սիրեցիր և ես ըլլամ անոնց մէջ»:

Վերեւ յիշուած, Յիսուսի խնդրանք աղերսին մէջ, Անոր աղօթքը եզակի և աննախընթաց փաղձանք մըն է, որ աշակերտները շարունակեն Իր հետ ըլլալ ուր որ Ան երթայ: Աշակերտ առաքեալները, թէպէտ հեռու կայնած էին իրենց Վարդապետին խաչելութեան ժամուն, սակայն իւրաքանչիւրը հաւատարիմ մնաց և անձնուրացութեամբ ու հերոսակա՛ն վկայութեամբ մահացաւ: Յիսուս երբեք չի մոռցաւ անոնց հաւատարմութիւնն ու վկայութիւնը: Անոնք կանգնեցան որպէս կենդանի վկաները իրենց Տիրոջ մարմնաւոր յարութեան ու դարձան լուսեղէն Բարոզիչները համայն աշխարհի, որպէսզի չի կորնչի Աստուծոյ Թագաւորութեան լուսեղէն աւետիսն ու հրաւերը:

Փառքի և պատիւի պիտի արժանանն ո՛չ թէ անոնք որոնք բիրտ ուժն ու մահարար զենքեր գործածող փառամուլներ էին, այլ անոնք, որոնք զոհեցին ու զոհուեցան ի սէր իրենց Քրկչին: Յիսուս երբ երկրի վրայ էր, չի մոռցաւ երկու լուրմա նուիրող որբեւայրին, ու պիտի չի մոռնայ նաեւ Իր նահատակները:

Յիսուս կը փնտռէ այն բոլոր Իրեն հաւատացողները, որոնք առանց տեսնելու Ձիւնք, ճանչցան թէ Ա՛ն է Օծեալը՝ Աստուծոյ Որդին: Ան նոյնիսկ ուրացաւ Իր արժանապատուութիւնը, առաւ ծառայի կերպարանք և լուաց աշակերտներուն աղտոտ ոտները: Յիսուս զոհելով Իր անձը ջանաց ազատել Իրեն հաւատացողները, "եսին" փառամուլութենէն և շնորհել անոնց յախտեանկան կեանք Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Ինչո՞ւ այսքան սէր և գուրգուանք յայտնել դէպի մարդ արարածը: Որովհետեւ աշխարհն ու մարդ արարածը Իր Ձեռներուն արտադրութիւններն էին:

Օծեալ Յիսուս ճանչցուց մեզի ճշմարիտ Հայր Աստուածը: Ոչ որպէս բարկացոտ ու կայծակներով խօսող Աստուած մը, այլ մեղմ ձայնով աղաչանօք խօսող ու մեզ Իր արեւին շողերովը փայփայող ու մեր յանցանքները ներող երկնաւոր Հայր մը: Յիսուս չի բաւականար, ու կ'ըսէ. **«Պիտի շարունակեմ ճանչցնել»:** զԱստուած՝ Յիսուսի ապրումին մէջ կը տեսնենք, Անոր մէջէն կը դիտենք, Անոր միջոցով կը ճանչնանք: Ուստի սերտեմք Յիսուսի ճառագայթող Աւետարանները և ճանչնա՛նք մեր Քրկիչը: «Ճանչնալ Բրիստոսը, անոր յարութեան զօրութիւնը, և անոր չարչարաններուն մասնակից դառնալ»--Փիլիպ 4.10: Աշակերտները ճանչցան իրենց Վարդապետը

մի միայն Անոր ծառայութեան, խաչելութեան ու Յարութեան ընդմէջէն: Մեր ինքնութիւնը աստուածութեան ցուցադրած տիեզերական տրամին մէջ մեր ստանձնած դերով կը սահմանուի:

Այժմ մասնակիօրէն կը ճանչնանք զԱստուած, որովհետեւ *«զկէն կը տեսնենք աղօթ կերպով»* --Ա.Կորնթ. ԺԳ.12: Երբոր մարդ ճշմարտութիւնը ճանչնալ կը սկսի, սրտին մէջ սրբազան զայրոյթ մը կը զգայ անիրաւութեան ու բռնութեան դէմ: «Մեր Փրկիչը, կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին և հասնին ճշմարտութեան ճանաչումին, թէ՛ մէկ Աստուած կայ միայն, և Աստուծոյ և մարդոց միջեւ միակ միջնորդ մը՝ Յիսուս Բրիստոս մարդը, որ ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար»--Ա. Տիմո. Բ.4-6:

«Պիտի ճանչնաք ճշմարտութիւնը և ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ»--Յով. Ը.32: զԱստուած չենք կրնար լման ճանչնալ, սակայն Չայն ճանչնալու մտածողմը մեզի *հաւատով* մըն է որ օր մը պիտի ճանչնանք Ձինք: «Որպէսզի ճանչնաք Բրիստոսի սէրը, որ ոեւէ միտքի հասողութենէն վեր կը մնայ»--Եփես. Գ.19: «Յաւիտենական կեանքը Բեզ ճանչնալն է՝ որպէս ճշմարիտ միակ Աստուած և ճանչնալ Յիսուս Բրիստոսը՝ որ դուն ղրկեցիր»--Յով. ԺԷ.3: «Ոչ ոք կը ճանչնայ -- ճշգրտօրէն կը հասկնայ) Որդին, եթէ ոչ՝ Հայրը. և ոչ ոք կը ճանչնայ (ճշգրտօրէն կը հասկնայ) Հայրը, եթէ ոչ՝ Որդին, և ան որուն *ուզէ յայտնել Որդին*--Մատթ. ԺԱ.27:

Ճանչցուած գիտութիւնը կամ հմտութիւնը՝ միայն *էրեւցած* իրականութիւնն է: Ինչո՞ւ չի հաւատալ իրականութիւններու որոնք մեր հասողութենէն *դուրս*, և ըմբռնելու կարողութենէն *անդին* են:

***Ուստի հաւատալով և յուսալով սպասենք այդ երջանիկ յայտնութեան, որ պիտի ջնորհուի բոլոր զԱստուած սիրողներուն:***

**Յունուար 6, 2004**

**Թորոնթօ**